

ՈՒՄԱՆՏԻԿ ՄԻՐՈ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ-ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՍՐԲՈՒՀԻ ՏՅՈՒՍԱԲԻ ԵՎ ՄԻՊԻԼԻ ՎԵՊԵՐՈՒՄ*

ՆԱԻՐԱ ՀԱՄԲԱՐԶՈՒՍՅԱՆ, ՄԻՐԱՆՈՒՇ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ

Ուսումնասիրության *նպատակն* է 19-րդ դարի երկրորդ կեսին ապրած և ստեղծագործած արևմտահայ կին հեղինակների՝ Սրբուհի Տյուսաբի «Մայտա», «Սիրանոյշ», «Արաքսիա կամ վարժուհի», և Միպիլի «Աղջկան մը սիրտը» վեպերի օրինակով ցույց տալ ռոմանտիզմի դարաշրջանի գրական տեքստերը՝ որպես ռոմանտիկական սիրո փիլիսոփայական-մարդաբանական մեկնաբանության և մշակութաբանական ֆեմոմենի ձևավորման հնարավորություններ, ինչպես նաև ընդգծել *ռոմանտիկ սիրո* և *ռոմանտիկ դիսկուրսի* խորքային կապը անհատի ինքնիրացման կարիքների և հնարավորությունների հետ:

Ուսումնասիրության *խնդիրն* է փիլիսոփայական-մարդաբանական դիսկուրսի միջոցով ընդգծել ռոմանտիկ սիրո արտահայտություններով պայմանավորված այն բոլոր փոփոխությունները, որոնք նյութականացվում և իրացվում են արևմտահայ կին հեղինակների վեպերում և առկա են *սուբյեկտ* ու *սուբյեկտիվություն* կատեգորիաների իմաստաբանական տիրույթների բազմաչափության մեջ¹:

Ուսումնասիրության *արդիականությունը* պայմանավորված է արդի ընկալումներում 19-րդ դարի երկրորդ կեսի ռոմանտիկական վեպի նորովի բացահայտմամբ, ինչը պատմամշակութային համատեքստում որոշակիորեն հակադրվում է վերլուծության ավանդական մոդելին: Արևմտահայ կին հեղինակների՝ Սրբուհի Տյուսաբի և Միպիլի ռոմանտիկական տեքստերը (վեպերը) ուսումնասիրել ենք փիլիսոփայական-մարդաբանական պատկերավորման, կանանց ազատագրության համատեքստում սոցիալ-մշակութային և աշխարհայեցողական փոխակերպությունների, ինչպես նաև՝ նշանագիտության տեսանկյուններից:

Բանալի բառեր - Սրբուհի Տյուսաբ, Միպիլ, ռոմանտիկ սեր, արևմտահայ կին հեղինակներ, փիլիսոփայական-մարդաբանական մեկնաբանություն, սուբյեկտ, սուբյեկտիվություն

* Ուսումնասիրությունը իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային «Կանանց հիմնախնդիրները 19-րդ դարի երկրորդ կեսի արևմտահայ գրականության մեջ» թեմատիկ ծրագրի շրջանակներում: Ծածկագիր՝ 2IT-6B118:

¹ Տե՛ս **Naira Hambardzumyan, Siranush Parsadanyan**, Philosophical-Anthropological Concepts of Subject and Subjectivity as a Genesis of Women’s Emancipation. WISDOM, vol. 24, no: 4, 2022, էջ 56-63. DOI: <https://doi.org/10.24234/wisdom.v24i4.953>.

Ներածություն

Միջանձնային հարաբերությունների փոխակերպությունները և փոխադարձ հաղորդակցությունները հաճախ բացահայտվում են ռոմանտիկ սիրո ֆենոմենի այնպիսի դրսևորումների միջոցով, որոնք բնութագրական են 19-րդ դարի երկրորդ կեսի (նաև՝ հետագայի) սոցիոմներին, որոնք փորձում էին ավանդական ամուսնական հին կարգաբանությունից, այսպես կոչված, *միջնորդական* կամ *առքուվաճառքային առարկայացնող* մոդելից անցնել նորի՝ զգացմունքներով պայմանավորված զուգրնկերոջ ընտրությանը: Ըստ Շլեգելի՝ ռոմանտիկական տեքստի գլխավոր գործառույթը միֆի ստեղծումն է, ռոմանտիկ սիրո միֆականացումը²: Ռոմանտիկական սիրո միֆը, որ անվերապահորեն ստեղծվում էր ռոմանտիկ հեղինակների կողմից, վարքագծի առանձնահատուկ մոդել էր, որը բնութագրական չէր տվյալ ժամանակաշրջանի շատ ներկայացուցիչների: Այնուամենայնիվ, հասարակության մտավորական շերտը գրական շատ երկերում և, ընդհանրապես, արվեստում, արձարձում էր ռոմանտիկական կրթերի ծածկագրերը՝ սուբյեկտի խորը անհատական կարիքներին համապատասխան: Այս մոտեցումը առավել գրավիչ և արժեքավոր դարձրեց ռոմանտիկ սիրո մոդելը կին հեղինակների երկերում, որոնց ստեղծած միֆը վիպական ժանրում նրբորեն գործում է ոչ միայն իմաստաբանական, այլև շարահյուսական փոխներթափանցումների տիրույթներում:

Ռոմանտիկ սիրո արտահայտությունը արևմտահայ կանանց երկերում օգնում է մեկ տեքստում միավորելու սուբյեկտի³ *ինքնանկարագիրը*, որի միջոցով նա ձեռք է բերում իր անհատականությունը, ուստի նրա զգացմունքների բնագոյային դրսևորումները, որոնք արժեքավոր են սիրո սուբյեկտի առկայության տեսանկյունից, ուղղորդվում են քնարական երկխոսության միֆական վեհացումով:

Էնթոնի Գիդենսը նշում է, թե սիրո վեհության արտացոլման պատմական ընկալումը ներթափանցել է անհատական կյանք՝ զգալիորեն ընդլայնելով պատումի ռեֆլեքսայնությունը, իսկ պատմականությունը (նարատիվը) ինքնին անհատականացվել է՝ անկախ սոցիալական համատեքստից⁴: Վեպը, ինչպես և գրական նոր ժանրը (խոսքը էպիստոլ-

² Տե՛ս **Шлегель Ф.** Речь о мифологии. Литературные манифесты западноевропейских романтиков. М.: Изд-во Моск. ун-та, 1980, էջ 62-65:

³ A subject is a being who has a unique consciousness and/or unique personal experiences, or an entity that has a relationship with another entity that exists outside itself (called an object). A subject is an observer and an object is a thing observed. Տե՛ս **Solomon R.**, Subjectivity, in Honderich: United Kingdom: Ted. Oxford Companion to Philosophy: 2005. Oxford University Press: 900 էջ:

⁴ Քսաներոդ դարի վերջում Էնթոնի Գիդենսը ձևակերպեց սիրային հարաբերությունների առաջացման նոր թեզը և անվանեց այն կոնֆլուենտային սեր, որը ռոմանտիկ սիրո հակադրությունն էր: Կոնֆլուենտային սերը, ըստ Գիդենսի, հեղինեղուկ, անցողիկ սեր է, որը հիմնված է սուբյեկտների սեռական գրավչության վրա, ովքեր, սակայն, միմյանց չեն օժտում հոգով միավորվելու հատկություններով, այլ ավելի շուտ հակված են վայելելու այդ հարաբերությունները՝ որպես փաստ կամ կյանքի իրադարձություն՝ այժմ և այստեղ: Այսօրինակ սիրային փոխհարաբերությունների տևողությունը որոշվում է միայն սուբյեկտների՝ այն երկարաձգելու պատրաստականությամբ,

յար (նամակագրական) վեպի մասին է), որը ստեղծեց Ժան Ժակ Ռուսոն «Նոր Էլոիզով», որպես սիրային ապրում կամ անհանգստություն և առօրեականությունից դուրս մեկ այլ իրականություն, տարբեր են, սակայն դրանք միֆեր են, որոնք ստեղծվում են ռոմանտիկ սուբյեկտի կողմից: Այդ առումով ռոմանտիկ սերը ինքնին զգացմունք չէ, այլ սիրո նկատմամբ սիրահարված սուբյեկտի մշակութային կարգավորումների (installations) համակարգ, որը վեպում իրացվում է ասացման և քնարական պատկերների ներքին մենախոսությունների միջոցով:

Սիրահարված սուբյեկտը (ռոմանտիկ սիրո սուբյեկտը, որը իրացնում է իր ներքին կարգավորումների համակարգը) ընկալվում է որպես սուբյեկտիվության տարաբնույթ ձևերից մեկը, որի հետևանքով թարմացվում է *Ուրիշ*⁵-ի հետ շփման հնարավորությունը: Սիրահարված սուբյեկտը ինքն իրենով է ընդգծում զգացմունքի առանձնահատուկ բնույթը, և դրա աստիճանական զարգացումը տեղի է ունենում հատկապես սեփական *ես*-ի և *Ուրիշ*-ի հետ ներքին փոխհարաբերությունների միջոցով:

Այսօրինակ վերաբերմունքը *Ուրիշ*-ին ընկալվում է որպես առանձնակի գաղափարաբանական, ինչպես նաև երկխոսական տարատեսակ աղբյուրից մաքրվելու հնարավորություն: Սուբյեկտիվության այս կերպը մինչ օրս ձգտում է պահպանելու *միասնության* ֆենոմեն դառնալու իր գործառույթն ու կարգավիճակը և հավակնում է բնականության և այն՝ կողմնայնության, որոնք ընդգծում են սիրո փորձառության սահմանը՝ չհավակնելով ոչնչի: Այս հանգամանքը չափազանց ուշագրավ է և արդյունավետ, քանի որ չափազանց բարձր է սիրային փոխհարաբերությունների և զգացմունքների գրավչությունը, իսկ բնագոյային (ռեֆլեքսայնության) մակարդակը ցածր է: Մոցիալական մոտիվացումը և ինժենեռիան՝ որպես տեխնոլոգիական հնարք, մշտապես իր ուշադրության կենտրոնում են պահում անհատի գոյաբանության այս հիմնախնդիրը:

Աշխարհիկացման գործընթացները որպես *անհնայի* դրսևորում

Արդի ժամանակներում առավելապես օգտագործվում է *խոստովանական* սիրո դիսկուրսը՝ որպես տարբեր միֆոլոգեմների և գաղափարախոսությունների հաղորդագրություններ, զանգվածային մշակույթի տեքստերում՝ սերիալներում, մելոդրամաներում, սիրային վեպերում, պարահոգեբանական գրականության մեջ, *վանիլային* բովանդակություն ունեցող սոցիալական ցանցերում՝ ազդեցություններ գործելու նպատակով:

Սույն երևույթը ուշագրավ է նաև պատմամշակութային ենթատեքստ-

ուստի, զուգրնկերների գրավչությունից ու ցանկությունից բացի, ոչինչ չի ապահովում նրանց համատեղ կյանքը: Սա ինտիմ հարաբերությունների զարգացման նոր փուլ է, որը վերաբերում է սուբյեկտիվության նոր ձևերին, որոնք համապատասխանում են պոստմոդեռնիզմի դարաշրջանի նոր մարտահրավերներին: Տե՛ս **Anthony Giddens**, *The Transformation of Intimacy: Sexuality, Love and Eroticism in Modern Societies*, Stanford University Press, Stanford, California, 1992, 212 էջ:

⁵ Տե՛ս **Semone De Beauvoir**, *The Second Sex*: Translated and Edited by H.M. Parshley. Jonatan Cape: Thirty Bedford Square London, 1956, London, 701 էջ:

տում և հնարավորություն է ընձեռում տեսնելու և հիմնավորելու ռոմանտիկ սիրո այն բոլոր փոխակերպությունները, որոնք տարբեր ժամանակներում տեղի են ունեցել տարբեր սոցիումներում դեռևս այս միֆի ձևավորման նախասկզբից: Այս համատեքստում 1880-90-ական թվականներին Օսմանյան կայսրությունում ապրած և ստեղծագործած արևմտահայ կին հեղինակների Սրբուհի Տյուսաբի «Մայտա»⁶, «Միրանոյշ»⁷, Սիպիլի «Աղջկան մը սիրտը»⁸ վեպերը բացառություն չեն և ամփոփում են սիրո (որպես ուղղահայացի) հասկացման և վերապրումի հայեցակարգերը: Այդ ուղղահայացները պայմանավորված են արևմտահայ կին հեղինակների՝ աշխարհի նկատմամբ ունեցած դասական ռացիոնալության, ռոմանտիկական-միստիկական վերաբերմունքի և դրանցով պայմանավորվող գիտակցության գոբալ առձակատումով: Դրանք դրսևորվում են ոչ միայն գնոսեոլոգիական, այլև գոյաբանական տիրույթներում:

Գիտակցության *դասական* և *ռոմանտիկ* տիպերը իմացաբանության տիրույթում հարաբերվում են ճանաչողության *ռեֆլեքսային* և *ոչ ռեֆլեքսային* մեթոդներին և հոգեֆիզիոլոգիայի տիրույթում միավորում են մտածողության բոլոր դրսևորումները: Այդ կերպ ձևավորվում է սիրահարված սուբյեկտի, որը միաժամանակ օբյեկտն է, երկու տեսակ՝ *ռացիոնալ* և *զգացմունքային*, որոնք հարաբերականորեն հակալկշռում են միմյանց:

Ռոմանտիկ սիրո դրսևորումը՝ որպես կնոջ կողմից գնահատվող և իրացվող հոգեբանական և մտավոր վիճակների արտահայտություն, արևմտահայ գրականության մեջ առաջին անգամ բացահայտվում է կին հեղինակների երկերի՝ վեպերի, պատմվածքների, բանաստեղծությունների ևն միջոցով: Աշխարհիկացման այս դանդաղ գործընթացները, որոնք սկսվել էին 19-րդ դարի երկրորդ կեսին, կնոջը ուղղորդում են՝ ստեղծելու և զարգացնելու ինքնակատարելագործման, ինքնիրացման նոր օրինաչափություններ, որոնք օգնում են հայրիշխանական մշակույթում արդիականացնելու նաև իրենց ներքին կանացիությունը: Սիրո այսօրինակ փորձառության խորհրդանշական իմաստն այն է, որ իռացիոնալ աշխարհը առօրեականություն է ներթափանցում *անիմայի*⁹ կանխատեսումների միջոցով:

⁶ **Սրբուհի Տյուսաբ**, Մայտա, Կ. Պոլիս, 1883, տպ. Ջարդարեան, 249 էջ:

⁷ **Սրբուհի Տյուսաբ**, Միրանոյշ, Կ. Պոլիս, 1885, տպ. Նշան Կ Պերպերեան, 408 էջ:

⁸ **Սիպիլի**, Աղջկան մը սիրտը, Կ. Պոլիս, 1891, տպ. Ճիվելեկեան, 251 էջ:

⁹ Անիման և անիմուսը (լատ. anima և animus - *հոգի*, համապատասխանաբար արական և իգական *հոգի*): Յունգի կողմից հոգեբանություն ներմուծված տերմիններ են՝ արական և իգական արքետիպերի նկարագրության համար: Յունգը *անիմուսը* առնչում էր կտրուկ, կոշտ, չափազանց սկզբունքային, արտաքին աշխարհի հետ կապված որոշումների հետ, իսկ *անիման*՝ էմոցիաների, տրամադրությունների և ներքին աշխարհի հետ: Յունգը գտնում էր, որ յուրաքանչյուր մարդ ունի անիմայի և անիմուսի տարրեր այնպիսի չափաբաժիններով, որոնք պայմանավորված չեն նրա սեռային պատկանելությամբ: Այսպիսով, տղամարդու բնավորության մեջ կարող է գերակայել անիմուսը, սակայն անկախ լինել նաև անիման: Տե՛ս **C. G. Jung**, Anima and Animus. N.Y.: Spring Magazine, 1957; **H. Binswanger**, Positive Aspects of the Animus. New York: Spring Magazine, 1963; **Anima J. Hillman**. New York: Spring Magazine, 1973; **Susan Rowland**, "Anima, Gender,

Նշված թեզի լավագույն օրինակ կարող է լինել Սրբուհի Տյուսաբի «Մայտա» վեպը, որը գրվել է *նամակագրական* վեպի ավանդույթներով: Վեպում նամակագրության միջոցով բացահայտվում են օսմանյան բռնապետական կայսրության փակ հասարակության հայրիշխանական բարքերը և սիրահարված սուբյեկտների՝ Մայտայի և Հերիգայի կարգավիճակները: Տյուսաբը բացահայտում է նաև ռոմանտիկ սիրո ֆենոմենը և դրա իրացումը պատմամշակութային համատեքստում՝ *անհասանելի սիրո էքստազի* փոխանցման միջոցով (Հերիգա-Տիգրան, Կոմս-Մայտա, Տիգրան-Մայտա), որը ստեղծվում է, երբ սիրահարված սուբյեկտը¹⁰ ամբողջանում է աշխարհի հետ իր ներքին *անհմայի*¹¹ միջոցով, որը կնոջ հանդեպ երկրային սերն է:

Զգացմունքի այսօրինակ փոխանցումը ստեղծում է հատուկ իդեալականացված բարձր և առանձնահատուկ սիրո կողմնորոշումը, որը այսպես թե այնպես ինչ-որ պատճառով հավերժական չէ և, հնարավոր է, նաև վտանգավոր է: Միաստիկական սիրո զգացմունքը ռոմանտիկական հարաբերությունների և ռացիոնալիստական ընկալումների համադրություն է, որը բնութագրական է 19-րդ դարի երկրորդ կեսի գրականությանն ընդհանրապես: Եվ չնայած տվյալ ժամանակաշրջանին հատուկ բարոյականության վերաբերյալ շեշտադրումներին, միևնույն է, Տյուսաբի «Մայտա»-ն *կանանց ազատագրությունը* հատկանշող գաղափարների համադրության տեքստ է: Այն բաղկացած է բազմաթիվ *նարատիվ-նամակներից*, որոնք կրում են «Մայտա առ տիկին Սիրա», «Տիկին Սիրա առ Մայտա», «Կոմս առ Մայտա» և «Մայտա առ Կոմս», «Տիգրան առ Մայտա» խորագրերը՝ կախված նրանից, թե ով է նամակի հեղինակը: Դրանցում հեղինակը և նրա հիմնական նամակագիրը՝ տիկին Սիրան, ինչպես նաև Կոմսը, Տիգրանը, Հերիգան, Պետրոսը պատմում են իրենց հույզերի, զգացմունքների և գործողությունների մասին:

Նամակ-հատվածների միջև սուբյեկտների *բազմակիություն* էֆեկտի միջոցով հստակորեն կարգավորված են տեքստի իմաստաբանական ու շարահյուսական տիրույթները: Սա Մայտա-Սիրա-Կոմս հաջողված դիսկուրս(ներ)ի միֆականացումն է, որում գաղտնագրվում է ստեղծագործական գործընթացը որպես փաստ, և նամակները ընթերցողի կողմից ընկալվում են որպես իրական մետապատումներ:

Անհրաժեշտ է նշել նաև, որ ուշադիր ընթերցման դեպքում առանձնանում են երեք հիմնական *մետապատկերումներ*, որոնք համակարգվում են հեղինակի կողմից: Սիրայի՝ որպես բարեկամուհու, կամ Մայտայի աղջկա Յուլիանեի անմեղության և ազատության պատկերումների թեմաները ստեղծում են նամակների միջոցով տրվող իրական զգացմունքների էֆեկտները:

Feminism”: Edited by Kelly Bulkeley, and Clodagh Weldon (eds), Teaching Jung, AAR Teaching Religious Studies Series, 2011, online edn, Oxford Academic, 22 Sept., 2011), <https://doi.org/10.1093/acprof:oso/9780199735426.003.0011>. 2022

¹⁰ Վեպում այն մարմնավորվում է Տիգրանի և Կոմսի կերպարներով:

¹¹ Տե՛ս **Susan Rowland**, Teaching Jung: Edited by Kelly Bulkeley and Clodagh Weldon: Chapter 2: Anima, Gender, Feminism, Oxford Academic, էջ 169-182:

Ռոմանտիկ սիրո ռացիոնալիստական համակարգումը

Տյուսաբի «Սիրանոյշ» վեպում ազդեցիկ դիրք է զբաղեցնում Սիրանուշի հայրը, «Արաքսյա կամ վարժուհի» վեպում՝ տիկին Աբգարյանը, «Մայտա» վեպում՝ տիկին Սիրան և Մայտան, որոնց հայացքների և սիրո ռացիոնալիստական համակարգումը, ներառյալ ինտելեկտի նկարագրության և գայթակղության պատկերավորման տեխնիկաների տիրապետումը, հեգնանքը և դինամիզմը, ներգրավումը *Ուրիշ*-ի տիրույթ, կերպարները գործնականում դարձնում են առավել կենսական:

Տյուսաբի և Սիպիլի վեպերում սիրահարված կանանց կերպարները (Մայտա, Սիրանուշ, Արաքսյա, Բուբուլ) պատկերվում են բարության և որոշ դեպքերում անմեղության հատկանիշներով՝ որպես *հայրիշխանական չգրված օրենքներով բանադրված բարոյականության զոհեր*: Մայտան առավել հասուն է, և ինչպես տեսնում ենք, նա Սիրայի հետ քննարկում է հայրիշխանական փակ սոցիումում կնոջը պարտադրվող կարգավիճակը՝ համարելով նրան հասարակության *ողորմելի զոհը*՝ «Իրօք, ի՞նչ կ'ընէ օրենքը: Օրենքը կնոջ վիզը չուան մի կ'անցունէ, գոր կը սեղմէ և կը թուլցնէ ըստ հարկին <...> Օրենքը ներումն կը շնորհէ արանց մուլտեանց, մինչդեռ կնոջ ամենափոքրիկ յանցանքը կը պատժէ խստի» (էջ 158-159): Նշյալ բոլոր վեպերում ուշագրավ են սիրահարված կանայք, նրանց հիացական պատիվությունը ոչ միայն շրջապատի, այլև աշխարհի հանդեպ: Սա *բոնասպետական-փակ սոցիումի հատկանիշ է*:

Ընդգծված զգայականություն, անհավասարություն, զոհաբերության պատրաստականություն, գայթակղվելու անհնարինություն, *Ուրիշ*-ի հանդեպ վստահություն, անկեղծություն և զգացմունքների զսպված արտահայտություն. սրանք են այն բնութագրերը, որ Տյուսաբի «Մայտա», «Սիրանոյշ», «Արաքսիա կամ վարժուհի» և Սիպիլի «Աղջկան մը սիրտը» վեպերում ունեն սիրահարված կին-սուբյեկտները: Այս բնութագրերում *իրական կիրքը* և կանանց *էքստատիկ* վիճակները, որոնք կմղեին նրանց կենսական գործողությունների, բացակայում են: Սույն հանգամանքը պայմանավորված է հայրիշխանական սոցիումով, որի խիստ ավանդական կանտոնները կանանց մղում են սոցիալական հասարակության լուսանցքներից դուրս: Սա տղամարդկանց հասարակությունն է, և այստեղ կինը մարգինալացվում է: Ուստի՝ սա բոլորովին այլ կյանքի *էթոս* է, որը *ուժ-գիտելիք* իշխանության ևս մեկ հնարք է: Ու թեև վերոնշյալ բոլոր վեպերի հեղինակներն էլ գլխավոր կերպարների միջոցով ստեղծում են տղամարդկանց բևեռացվածության կոլիզիան, որի զոհն են Մայտան («Մայտա»), Սիրանուշը («Սիրանոյշ»), Բուբուլը («Աղջկան մը սիրտը»), ինչ-որ չափով՝ Արաքսիան («Արաքսիա կամ վարժուհի»), այնուամենայնիվ նրանց բոլորի ներսում ապրում է սիրո ներքին զգացումը: Թեև Սիպիլի գլխավոր կերպարի՝ Բուբուլի դեպքում սիրո անկումը հանգեցնում է մահվան, քանի որ նա հանուն իրեն անձանոթ սիրո զգացմունքը լիարժեքորեն ապրելու հրաժարվում է ինքն իրենից, սեփական *էս*-ից: Նա հակված է իռացիոնալության ու այնկողմնայնության և գիտակցում է

կյանքի ավարտուն լինելը, գիտակցում է նաև սեփական մարմնի վերջավոր լինելը: Այնկողմնայնությունը դառնում է իրականություն և անհատական մակարդակում ձեռք է բերում գոհաբերության հատկանիշներ: Բուբուլը հրաժարվում է իր սիրուց: Այդ հրաժարումը, սակայն, մահվան միջոցով ամբողջանալու այն հնարավորությունն է, որ *Ուրիշ*-ը (Գառնիկը) իր սպառողական բնույթի շնորհիվ ձեռք է բերում կին-սուբյեկտի (Բուբուլի) գոհաբերության (մահվան կամ կյանքից հրաժարումի) հաշվին:

«Սիրանոյշ» վեպում իրավիճակը քիչ այլ է. հայրը Սիրանուշին պարտադրում է գոհաբերություն կատարել, և դրանով խախտվում են սրբացման ծեսը և ներքին հավասարակշռությունը աղջկա և սոցիումալի միջև, որը նույնպես հանգեցնում է մահվան: Այնկողմնայնությունը այս դեպքում ապահովում է հույզերի և զգացմունքների իրականությունը, որը անմիջականորեն արտացոլում է մարդկային հարաբերությունների տիրույթը, որտեղ մարդը մշտապես ձգտում է վերջնական իմաստի ձեռքբերմանը, որը մարդու այլության վերջնական արդյունքն է, քանի որ տեղի է ունենում հոգեբանական մաքրագործումը, որը ամբողջովին ներագրում է սիրո օբյեկտի վրա:

Էքզիստենցիան որպես ռոմանտիկ սիրո և տառապանքի գոյաբանական սահման

Սիրո փորձառության կախարդական հմայքը ընդհանրապես կրում է մարդկային բնագոյների անհավատալի վերափոխությունը և հուզական-զգայական էներգիայի ակնթարթային վերաբաշխումն ու վերաուղղորդումը: Սիրահարվելով մարդը հավատում է, որ գտել է իր կյանքի իմաստը և վերջնանպատակը, որոնք նա բացահայտում է մեկ այլ մարդու գոյությամբ: Գտնելով իր բացակայող կեսին՝ մարդը ունենում է ամբողջականության զգացողությունը և լիանում է: Հետևաբար, նա ինքն է իրեն զգում որպես ամբողջական սուբյեկտ, որը կարող է իրական կյանքով ապրել: Նրան թվում է, թե կյանքը լցվել է գերմարդկային էներգիայով և սովորական երկրային գոյությունից հասել է անմատչելի բարձունքների: Նման անմատչելիությունը նրա համար իսկական սիրո հանդեպ վստահության նշան է:

Հոգեբանական այս ամբողջությունը ներառում է, սակայն, անգիտակցական պահանջներ, որոնք նրա ներսում անպայմանորեն ստեղծում են զգացմունքների ինտենսիվությունը և հրճվանքը: Եվ երբ սուբյեկտը զգում է, թե ինքը տարված է, և թե ինչ-որ ուժի ազդեցության և իշխանության ներքո է, նա կրկին բացահայտում է իր կյանքը և կրկին վերագտնում ու իմաստավորում է աշխարհի հետ իր ներքին հոգեկան կապը: Այդ պատճառով, երբ նա սիրահարվում է, աշխարհը բազմաթիվ ներքին իմաստներ է ձեռք բերում, և ցանկացած առօրեական մանրուք իմաստավորվում է այնկողմնայնությամբ:

Եվ երբ սիրահարվածությունն անցնում է, աշխարհը դառնում է մռայլ և դատարկ, թեև կինը և տղամարդը նորից մնում են նույն մարդիկ, որոնք ունեին այդ զգացումները: Այլ կերպ՝ սուբյեկտը, թեկուզ կարճա-

ժամկետ, սակայն կարծում է, թե կարող է հաղթահարել սովորական մահկանացուի իր կարգավիճակը և կյանքը դարձնել առավել ամբողջական, երջանկացնել իր ընտրյալին՝ սիրո օբյեկտին հաղորդելով կարևորության, առույգության ու էքստազի զգացողությունները և դրանց միջոցով փորձել հասնել ամբողջականության նաև աշխարհի հետ:

Արևմտահայ կին հեղինակներ Տյուսաբի և Միպիլի վեպերում սերը մեկնաբանվում է որպես կյանքի միակ իմաստ, հակադրվում է նյութին հարստությանը, թեպետ երկու դեպքում էլ (սիրո և հարստության սպառումներով) համահարթեցվում է կին-սուբյեկտի կարևորությունը: Արդյունքում, ռոմանտիկ զգացմունքների, հույզերի և ապրումների տևակա-նության մեջ սերը վերածվում է կյանքը ապրելու ունիվերսալ հնարավորության, քանի որ ռոմանտիկ սիրո մեջ առկա է նաև տառապանքի բաղադրիչը, որը միաժամանակ լինելության ճգնաժամը գոյաբանորեն հաղթահարելու ճանապարհն է: Միրահարվածի հոգևոր թռիչքի մեջ միաժամանակ առկա են հաղթանակի և պարտության, ուժեղության և թուլության, չարի և բարու բինար բաղադրիչները, քանի որ սուբյեկտը աստիճանաբար սկսում է ընկալել աշխարհի անկատարությունը, որը ոչ այնքան բանական է, որքան ներգրավված է գոյի օտարման և նյութակա-նացվող մարմնական փորձի լինելության տիրույթում:

Այս դեպքում է, որ ենթարկվելով *Ուրիշ*-ի հանդեպ սիրո ամենակույ զգացողությանը՝ կին-սուբյեկտը հասնում է սեփական օտարվածությանն ու մենակությանը, սակայն կարողանում է զգալ *Ուրիշ*-ի զգայութ-յունների ոչ բանական հիմքերը: Նա հասկանում է, որ ցավի և մենա-կության զգացողությունների դեպքում բոլոր մարդիկ ունեն այն նույն ապրումները, որոնք ձևավորում են հոգու և մարմնի հիշողությունները: Ցավի ճանաչողության այս նոր գիտելիքի շնորհիվ է կին-սուբյեկտը սկսում է հասկանալ այն բոլոր նշանները, որոնք հակադրվում են լոգո-սին, իշխանությանը, քանի որ հնարավոր իրական գիտելիքը նրան տրվում է փորձի միջոցով: Հետևաբար, առերեսումը ցավին և մենակությ-յանը առերեսվելն է սեփական ինքնությանը՝ տարածաժամանակային քրոնոտոպից դուրս: Այս առերեսումն էլ վերադարձնում է կին-սուբյեկ-տին աշխարհի արքետիպային ընկալմանը, որտեղ անձնական ցավը և աշխարհի ցավը միավորվում են ու դառնում անսահման: Այս դեպքում *Ուրիշ*-ը չի կարող օգնել, քանի որ նա նույնպես միայնակ է և անգոր է՝ վերացնելու գոյաբանական լինելության (էքզիստենցիալի) սահմաննե-րը: Դրանց հաղթահարումը հնարավոր է միայն քնքշության միջոցով, ո-րը որոշակիանում է, երբ *Ուրիշ*-ի մեջ սուբյեկտը ճանաչում է ինքն իրեն: Սերը վերապրած կին-սուբյեկտի տառապանքը կնիքվում է մենակությ-յան գիտակցմամբ և աշխարհի հետ հնարավոր միավորմամբ:

Մահը որպես սիրո անխուսափելի և բացարձակ փոխակերպություն

Միբուց ստեղծված անհանգստության էքզիստենցիալ-գոյաբանա-կան իմաստը տառապանքի միջոցով վեհանալն ու աշխարհի հետ միա-

վորվելն է: Միայն թե տառապանքը անսահման է և կարող է հանգեցնել վերջնակետի (մահվան), ինչպես Միպիլի «Աղջկան մը սիրտը» և Տյուսաբի «Միրանոյշ» վեպերի գլխավոր կին կերպարների՝ Բուբուլի և Միրանուշի դեպքում է. ***մահը գիտակցվում է որպես անխուսափելի և բացարձակ փոխակերպություն:*** Հետևաբար, մահը կարևոր դեր ունի ինչպես ռոմանտիկ սիրո, այնպես էլ սիրո առասպելացման և ապաստարացման տիրույթներում: Մահվան նշանագիտական պատկերման լեզվի մասնագետները (Միրանուշ, Բուբուլ, Հերիգա, Յուլիանե) իմաստային ունիվերսումը չի ամբողջանում, քանի որ խոցելի է:

Իրականությունից սնվող անհանգստության մեջ մահը բացարձակ մարզինալ է, այդ պատճառով մահվան և մահացածների, մասնավորապես սիրելիների մահվան թեման գրավում է ռոմանտիկներին: Այս հանգամանքը տեսանելի է նաև համաշխարհային գրականության նմուշների՝ «Տրիստան և Իզոլդա» ասպետական վեպի արքետիպային կերպարների, Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետ» ողբերգության և այլ երկերի համատեքստերում, որոնցում ռոմանտիկ սիրո պատմությունները ողբերգական են:

Մահը դառնում է կերպափոխման և ազատության անվերապահ խորհրդանիշ: Ռոմանտիզմի մեջ այս ավանդույթը շարունակվում է. այն լրացվում է տառապող և հիասթափված սուբյեկտի դեկադենտական-անկումային ինքնասիրությամբ, որը պատրաստ է ոչնչացնել ողջ աշխարհը հանուն սիրելիի: Լավագույն օրինակը այս դեպքում Միպիլի Բուբուլն է, որը հանուն սիրելիի հրաժարվում է իրեն բաժին հասած ապահով կյանքից, գնում է սիրո հետևից, սակայն հայտնվում է հայրիշխանական փակ սոցիումի իրականության մեկ այլ սահմանում. դոգմատիկ ու տաբուացված հասարակությունը մարզինալացնում է իր օրենքներին չենթարկվող աղջկան: Խոստովանության (նամակը գրելու) հայտնի տեսարանում Բուբուլը հաղորդություն ստանալու պես է արտասանում՝ *Ես Բուբուլն եմ՝* գերբնական կամք գործադրելով և ճեղքելով *օբյեկտից սուբյեկտ անցման ճանապարհը կյանքի և մահվան միջև*, ընդհուպ *մինչև այն սահմանը, որից այն կողմ չկա շարժում և չկա վերադարձ: Ռոմանտիկ սիրո դիվային և հաճախ «անբարոյական» բնույթը խլում է սոցիումով պայմանավորված նրա ազատությունը:*

Հետադիմական հասարակությունների կողմից անբարոյականություն համարվող այս դրսևորումը հատկանշական է 19-րդ դարին, և ինչու ոչ, առկա է նաև արդի ժամանակներում: Մույնը բնութագրական է չզարգացած և տգետ սոցիումներին, թեև Բուբուլը արդարացված է, քանի որ գործում է անկեղծության ազդեցությամբ: Բուբուլի կերպարը բացարձակի հասցված ռոմանտիկ աղջկա կերպար է, որում կյանքը իմաստավորող սիրո զգացումը ներհատուկ է մահվան, և որում ընդգծվում է անտարբերությունը այն ամենի նկատմամբ, ինչը սիրո առարկա չէ: Մրբության և սիրո այդ խառնուրդը, թվում է, ունի հեռանկարներ, քանի որ սիրո սրբացման և վերաիմաստավորման ճշգրտությունն առավել արժեքավոր է, քան այն, թե

աղջիկը երիտասարդ էր և անմեղ: Միայն զհետևացում է սիրո երկակիությունը՝ հայկական մշակույթ բերելով Բուբուլի և Գառնիկի կերպարները:

Սերը որպես միֆոլոգիական տիեզերք

Այսպիսով, սերը հնարավորություն է, որի միջոցով մարդը նախ ճանաչում է ինքն իրեն¹², իր առանձնակիությունը որպես ինքնություն արժեք և առաքինություն: Ռոմանտիկ սերը բնութագրվում է որպես սրբություն, որը հաճախ ուղղորդում է մարդուն՝ անցնելու թույլատրելի սահմանները: Միտո սրբացումը, սակայն, տարբաժանելի չէ անխուսափելի պղծումից և առավել տեսանելի է, երբ այդ պղծումը տեղի է ունենում սուբյեկտի ինքնիրացման ներքին համակարգում: Ուստի՝ հասարակության բարոյականության հիմքերը խախտող որոշակի արարքի ընդունակ է միայն այն սուբյեկտը, ով գտել է սեփական *էս*-ը և կարող է վերականգնել աստվածային բարոյականությունը: Հետևաբար, սիրո պաշտամունքին զուգահեռ ծնվում է նաև ցանկալի պաշտամունքը:

Միրելու և սիրված լինելու ցանկությունը *միֆոլոգիական տիեզերք* է ներմուծում մաքրության պատկերներով իդեալականացված *կանացիությունը*, որը Տյուսաբի «Միրանոյշ» վեպում հարկադիր ամուսնության միջոցով ենթարկվում է պղծման և հպատակության, իսկ ֆրանսուհի կնոջ՝ Ժանեթի կերպարի միջոցով Տյուսաբը ի հայտ է բերում կանացի դիվային բնույթը, որը նյութականացնում է սիրո պղծումը և ձգտում է գերակայության: Միտուց ծնված փորձառությունը գնահատվում է բարձր, քանի որ ռոմանտիկ սիրո սոցիալականացման ֆենոմենը, որպես առանձնակի ծիսակարգ, վերարտադրում է իրեն՝ ենթարկվելով *ռոմանտիկ սիրո* օրինաչափություններին: Այս ֆենոմենը լավագույնս նկարագրված է Խոսե Օրտեգա ի Գասեթի¹³ կողմից Ստենդալի «Միրո մասին» էսսեի և վերջինիս *բյուրեղացման*¹⁴ տեսության քննադատության մեջ, որում Գասեթը պնդում է, թե մարդկային սիրո հիմքը սիրո օբյեկտը փրկելու ցանկությունն է. չհիանալ, չտարվել, մոտ չթողնել, *սակայն համառորեն պնդել նրա գոյությունը*. մերժել աշխարհի այն կառուցվածքը, որտեղ սիրո օբյեկտը չի կարող գոյություն ունենալ¹⁵: Սակայն, ըստ էության, սա նույնն է, ինչ նրան անընդհատ կյանք ներշնչելը, քանի որ այն հասանելի է մարդուն միայն սեփական մտքերում: ***Սերը կյանքի հավերժական պարզն է, արարում և հոգու խնամք:***

Միրո միջոցով կատարելության ձգտումը և *բյուրեղացումը* սուբյեկ-

¹² Տե՛ս **Jose Ortega Y. Gasset**, On love: aspects of a single theme, 2012, Publisher: Martino Fine Books, 204 էջ:

¹³ Տե՛ս նույն տեղը:

¹⁴ *Բյուրեղացում* հասկացությունը առաջադրել է Ստենդալը, որպեսզի նկարագրի սիրո ծնունդը: Տե՛ս **Stendal**, On Love, Translated from the French with an Introduction and Notes by **Philip Sidney Woolf** and **Cecil N. Sidney Woolf**, M. A., Fellow of Trinity College, Cambridge. New York. Brentano's: First Published 1915, Reprinted 1920 Printed in Great Britain at The May flower Press, Plymouth: William Brendon & Son, 336 էջ:

¹⁵ Տե՛ս **Jose Ortega Y. Gasset**, նշվ. աշխ.:

տի մեջ ստեղծում են օբյեկտին տիրանալու և ունենալու ցանկությունը, քանի որ նա ցանկալի է դառնում հենց այն մտավոր գործողության արդյունքում, որը ոչ այլ ինչ է, քան սիրահարված լինելու պրոցեսը: Այդ պատճառով Գասեթը առաջադրում է *սիրել* և *սիրահարված լինել* հասկացությունները: *Բյուրեղացման* ֆենոմենը, իհարկե, ամփոփում է սիրային ողջ պատմությունը, որը օբյեկտի ռոմանտիկացման և աստվածանացման տիրույթում է: Ստենդալի առաջին *բյուրեղացումին* հաջորդում է երկրորդը՝ նա ինձ սիրում է¹⁶, որը բնութագրվում է սիրո օբյեկտի շուրջ անվերջ դիսկուրսով և ներառում է սուբյեկտի ողջ կենսական աշխարհը:

Եզրակացություն

Տյուսաբի «Մայտա», «Միրանոյշ» և Միպիլի «Աղջկան մը սիրտը» վեպերում ռոմանտիկ սիրո գոյաբանությունը, կյանքի և մահվան փիլիսոփայությունը դիտարկելի են բացառապես սիրուն առնչվող հույզերի ու զգացմունքների տեսանկյունից, որոնք արևմտահայ կին հեղինակները՝ Տյուսաբը և Միպիլը, իրացնում են *երևակայության* տիրույթում: Սույնը նաև օբյեկտին հեռահար ճանաչելու հնարավորությունն է, մինչև ֆիզիկական մերձեցումը ընկած ժամանակահատվածը: Այս դեպքում սուբյեկտը իր երևակայության տիրույթում ստեղծում է ինչպես սիրո օբյեկտը, այնպես էլ ինքն իրեն՝ որպես այդ օբյեկտը սիրողի: Մա սիրո սուբյեկտի ծիսականացման և օբյեկտի ստեղծման որոշակի ձև է: Կին հեղինակները կին կերպարների սիրահարվածության միջոցով են հայտնագործում սուբյեկտիվացման ֆենոմենը:

Միրո համամարդկային արժեքը այս դեպքում ծնվում է մարդու՝ հոգեբանական և սոցիալական ամբողջություն դառնալու կարիքից, որը հաճախ թվում է կեղծ, քանի որ այն ընդամենը երևակայության աշխատանք է, պատրանք, իռացիոնալություն: Հետևաբար, փորձը, որը հատուկ է ինչպես 19-րդ դարին, այնպես էլ ժամանակակից մշակույթին, դիսկուրսիվության և պատմականության տիրույթներում շարունակում է ներագդել կյանքի վրա: Այս տեսանկյունից ռոմանտիկ սերը իրական է, որքանով որ իրական են գաղափարները, որոնք կրում են Միպիլի և Տյուսաբի կերպարները՝ Բուբուլը, Միրանուշը և Մայտան: Միպիլը և Տյուսաբը վեպերի զարգացումները բխեցրել են 19-րդ դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրության հայրիշխանական սոցիումում գործող բարքերից և չափանիշներից, բռնապետական արժեհամակարգից, հայոց ազգային հիմնախնդիրներին առնչվող համընդհանուր շահերից:

Օսմանյան կայսրության փակ հասարակության ավանդական մոդելներին հակադրվում են *սուբյեկտ* և *սուբյեկտիվություն* փիլիսոփայական և մարդաբանական կատեգորիաները, որոնք համապատասխանում էին փոխակերպվող հասարակության պահանջներին, կենտրոնացած էին քաղաքացիական, իրավական, տնտեսական սուբյեկտի

¹⁶ Stendal, նշվ. աշխ.:

ստեղծման վրա, որը կարող էր պատասխանատվություն ստանձնել ոչ միայն սոցիալական գործընթացի, այլև սեփական կյանքի համար:

НАИРА АМБАРЦУМЯН, СИРАНУШ ПАРСАДАНЯН – *Философско-антропологическая интерпретация романтической любви в произведениях Србуи Тюсаб и Сипил.* – Цель исследования – показать литературные тексты эпохи романтизма на примере романов западноармянских писательниц второй половины 19 века Србуи Тюсаб («Майта», «Сирануш», «Араксия, или Гувернантка») и Сипил («Сердце девушки»), которые сформировали культурологический феномен философско-антропологической интерпретации романтической любви, а также подчеркнуть глубинную связь романтической любви и романтического дискурса с потребностями и возможностями самореализации личности. Задача исследования – с помощью философско-антропологического дискурса выявить все те изменения, связанные с романтической любовью, которые материализовались и реализовались в романах западноармянских писательниц и присутствуют во всей многомерности семасиологических категорий *субъект* и *субъектность*. Актуальность исследования обусловлена новым прочтением романтического романа второй половины 19 века в условиях вызовов современности, что в историко-культурном контексте противопоставляется традиционной аналитической модели. Романтические тексты (романы) западноармянских писательниц – Србуи Тюсаб и Сипил – были изучены нами в рамках философско-антропологической поэтики с учетом контекста женской эмансипации, социально-культурных и концептуальных трансформаций, а также с точки зрения семиотического анализа.

Ключевые слова: *Србуи Тюсаб, Сипил, романтическая любовь, западноармянские писательницы, философско-антропологическая интерпретация, субъект, субъектность*

NAIRA HAMBARDZUMYAN, SIRANUSH PARSADANYAN – *Philosophical-Anthropological Interpretation of Romantic Love in the Works of Srбуhi Tyusab and Sipil.* – The aim of the study is to show the literary texts of the Era of Romanticism, as opportunities for the formation of a philosophical-anthropological interpretation of romantic love and a cultural phenomenon, using the example of the novels “Mayta”, “Siranush”, and “Araksia or the Teacher” by Srбуhi Tyusab and “A Girl’s Heart” by Sipil, Western Armenian female authors who lived and created in the second half of the 19th century, as well as to emphasize the deep connection of *romantic love* and *romantic discourse* with the needs and possibilities of an individual’s self-realization. The problem of the study is to emphasize all the changes conditioned by expressions of romantic love, which are materialized and realized in the novels of Western Armenian female authors and are present in the multidimensionality of the semantic domains of the categories of *subject* and *subjectivity*, through the philosophical-anthropological discourse. The relevance of the study is conditioned by the discovery of the romantic novel of the second half of the 19th century in a new way in the domain of modern challenges, which is opposed to the traditional analysis model in the historical and cultural context. We have studied the romantic texts (novels) of Western Armenian female authors, Srбуhi Tyusab and Sipil, in the context of philosophical-anthropological depiction and women’s emancipation from the perspectives of socio-cultural and world-view transformations, as well as symbolism.

Key words: *Srбуhi Tyusab, Sipil, romantic love, Western Armenian female authors, philosophical-anthropological interpretation, subject, subjectivity*